ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒԼԻՍ 15, ԹԻՒ 13 · ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 134

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական Նշմարք.— Մեր Ազգային Սուղ Դասը, խօսեցեալ ի 5դ տարեդարձի Ուստրրի Գրադարանին.— Ակնայ Զարդին Պատմութիւնը.—Ամերիկայի Հայ ուսանողներուն— Անգլիերէնի Դասեր.— Այլևայլք։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Շնորհակալութեամբ ստացած ենք Պաթավիոյ հարենակիցներուն կողմէն, ի ձեռն Տիար Գ. Գ. Գասպարեանի յղուած հարիւր Ֆրանքի գումարը, նպաստ ՀԱՅԿԻ համար։

Evolution բառին յարմար հայերէն մը նշանակելու մասին մեր առաջարկութեան պատասխանած է «Բազմավէպ» · կը սպասենք «Հանդէս Ամսօրեայի» Յուլիս թուոյն, որպէս զի նորա կարծիքն ալ իմանալէ վերջը ներկայացնենք մեր նկատողութիւններն։

Այն ազգայինք որք ՀԱՅԿԻ ներկայ տարուոյ առաջին վեցամսեայն միայն վճարած էին, թող հաճին անյապաղ մէկ տոլար յղել երկրորդ վեցամսէին համար։

Վերջերս շատ գանգատ լսեցինք մեր Ամերիկայի հայրենակիցներուն ոմանց կողմէն թէ ի Թուրքիա դրամ փոխադրելու համար այլ և այլ հայ սարաֆներէ փոխագիր առած են և արեւելեան խռովութեանց պատրուակաւ անվճար մնացած են իրենց պահանջ փոխ-գրեր։ Այս անտեղութեանց վերջ կը տրուի այժմ Պոլսեցի Գարակէօզեան ծանօթ դրամատէր տան փոխանակագիր տալովը, որ հաստատուած է ի Նիւ Եորք։

Պուլկարիայէն կը գրէ ՀԱՅԿԻ հին բաժանորդներէն մին թէ այս թերթին այսքան տոկալն կը ցուցնէ թէ մեր ազգին մէջ բարոյական և բանիմացութիւն բոլորովին չքացած չեն։ Մենք ալ այդ հաւատքն ունինք, հակառակ մեր քսակին բարձրաձայն բողոքներուն։

Wheelerներու ժանտախտ մը կայ կարծես Ամերիկայի մէջ։ Անցեալներ Տիար Յովհաննէս Քէպապեան, Նիւ Հէյվընցի, կորովի յօդուածով մը կը հարուածէր Հուիլլըր գոմն հայատեաց ու անհեթեթ կարծիքներ բաշխած էր մեր ազգին նըկատմամբ · այս օրերս ալ Տիար Մալարեան, Քորնէլի մէկ Հուիլլըրին կ'ուղղէ նմանօրինակ հերքողական մը։

ՀԱՅԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Տիար Թ., Բարիզ—Ձեր խնդրոյն շատ համակիր եմ, բայց ցարդ չյաջողեցայ կատարել զայն։

Տիար Յ. Ի., Բարիզ—Անցեալ ձմեռ կարքալաքիս մէջ Հայոց խնամակալ Յանձնախումբ մը, նեղեալ գաղթականաց սնունդ մը հայթայթելու, ոչ թէ ուղեւորութեան ծախքեր հոգալու · բայց և այն վերջացած է։

Տիար Ա., Գահիրէ—Ձեր Մանտա տը Փոսթը, 20 ֆրանքի, ստացայ շնորհակալութեամբ։

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՍՈՒՂ ԴԱՍԸ

ԽՕՍԵՑԵԱԼ Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՈՒՍՏԸՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Ի 6 Յունիսի, 1897
Ի Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԷ.

Քանի՛ քանի՛ անգամ ձեր հանդէսներուն ներկայ գտնուելու հաճոյքն ունեցած եմ վերջին տարիներուն, բայց այս ներկայ հանդէսը յոյժ տարբեր կը տեսնեմ նախորդներէն։ Երկու վարդապետ կայ մէկի տեղ, բայց այդ յաւէտ դիպուածոյ առաւելութիւն մ'է. երկու կամ երեք մարդապետի տեղ 40 կամ 50 մարդապետներ կը տեսնեմ հոս,—այսինքն կիներ, և այդ է ահա այս գաղթականութեան և հանդիսին շնորհք տուող նոր պարագան, որուն համար ի ջերմ սրտէ կը շնորհաւորեմ զձեզ։ Եւ զայս այնքան աւելի համարձակորէն կ'անեմ որքան կը տեսնեմ դա արձանագրութիւնը խոշորագիր—«Կը շնորհաւորենք Հայ Տիկնանց Օժանդակ Ճիւղը Հայկական Գրադարանին։» Ուրեմն կը գործեն հայ Տիկիններն. ուրեմն կեցցե՛ն հայ Տիկիններն։

Հայ Տիկին մ'ալ սա մեծ պատկերին մէջ կը տեսնեմ. լաւ արեր էք սրահին վերի ճակատը դնելով զայն։ Դա պատկեր է, նշան է, բայց մեզի համար իրականութիւն է այդ «ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ,» տխուր, ձեռն ի ծնօտ, աւերակաց վրայ նստած։ Մեր մանկութենէն ի վեր սովորած ենք այդ սգաւոր Մայրը տեսնելու, բայց երբէք այնքան լաւ հասկցած չէինք անոր սգաւորութեան պատճառը ինչպէս այժմ կը հասկնանք դժբաղդաբար։

Խորհա՞ծ էք թէ այդ Մօր պատմութիւնը որքա՞ն նման է Յոբայ պատմութեան։ Յոբայն՝ վէպ է, կ'ասեն քննադատք. սակայն Հայաստանի Մօրն արկածք, քան զՅոբայն հազար անգամ աւելի ահաւոր, ճշմարիտ պատմութիւն է։

Յոբ շատ հարուստ և բարի մարդ մը էր, և ունէր եօթն ուստր և մէկ դուստր։ Օր մը լրաբեր մ'եկաւ և Յոբին գուժեց թէ աւաղակներ տարին եզերն ու էշերն։ Ուրիշ մը վրայ հասաւ և ասաւ. Հօտերն յափշտակուեցան։ Եւ ուրիշ մը լուր բերաւ թէ ուղտերը տարին. և դեռ խօսքը հազիւ լմնցուցեր էր վերջինը, երբ ուրիշ գուժկան մը հասաւ և պատմեց թէ ահաւոր արկածի մը զոհ գնացին եօթն որդիքը և մէկ դուստրը։ Յոբ զարմանալի համբերութեամբ տարաւ այս ամեն աղէտներն և վերջապէս օրհնուելով՝ եղաւ աւելի հարուստ քան յառաջագոյն և ստացաւ եօթն ուստր և երեք դուստր։

Այժմ բաղդատեցէք Յոբայ զՄայրն Հայաստան։ Սմա ալ լուր կուգայ թէ Քրդերը եկան և իր որդւոց հօտերն յափշտակեցին, եզերը տարին, էշերը քշեցին։ Եւ ահա լուր մը ատոր ետևէն թէ հունձքը այրեցին, խոտի դէզերուն կրակ տուին։ Եւ կուգայ չարագոյն լուրը թէ թշնամիք սրի բերնէ անցուցին իւր որդիքն ու աղջկունքն ի Սասուն. և Մայր Հայաստան կ'ողբայ դառնագին։

«Մա՛յր» կը գուժէ յաջորդ պատգամաւորն, «որդիքդ ու աղջիկներդ ջարդուեցան ի Տրապիզօն»։—Ա՜հ...

«Մա՛յր, որդիքդ ու աղջիկներդ կոտորեցան ի Բաբերդ։»

Եւ դեռ խօսքը բերանն էր երբ ուրիշ պատգամաւորներ իրարու ետևէ վրայ հասան և աղաղակեցին «Ջարդուեցան նաև ի Կարին,» «Ջարդուեցան և ի Խարբերդ,» «և ի Մալաթիա,» «և ի Բալու,» «և յԱրաբկեր,» «և ի Մարաշ,» «և յԵդեսիա,» «և յԱյնթապ,» «և ի Կ. Պոլիս,» «և յԱկն,» «և ի Վան,» «և ի Թոգաթ։»

Դադրէ՛ լրաբեր, կանգ առ հեռագիր, ալ մի՛ շանթահարեր այս թշուառ կինը քու չարափայլ կայծակներովդ. հերի՛ք, հերի՛ք։

Գուժաբեր հեռագիրը դադրած է քանի մը ամիսէ ի վեր. և Մայրն Հայաստան կ'ողբայ անմխիթար, և կ'աղօթէ։

Ինչպէս Յոբայ այցելուներ եկան մխիթարելու համար, կան նաև այցելողներ Մօրն Հայաստանի։ Շատեր իրօք կը ցաւակցին անոր, և անոյշ խօսքերով սիրտ դնել կը ջանան, կամ վէրքերը դարմանել, և ոչ սակաւք կուտան նմա կտոր մը արծաթ։ Ասոնց մէջ կան շատ Ամերիկացիներ. օրհնեա՜լ լինին։

Սակայն կան ալ որք սփոփելու տեղ կը զկծեցուցեն նորա ցաւերը պէսպէս պարսաւականներով.—Ինչ՞ կը ճչես այդքան, ինչ՞ կայ, կ'ասեն։ Եւրոպա կ'ասէ. ձայնդ կտրէ՛, կնիկ, հիմա գործ շատ ունինք, վերջը քեզի ալ կը լսենք...

Իսկ ջարդէն ազատած որդի՞քը ինչ

կ'ասեն նմա։ Ոմանք կ'ասեն· Ա՛լ լմնցաւ, Մա՛յր, աւերեցաւ տուն տեղ, մենք կը փախչինք կ'երթանք օտար երկիր, կը կորսուինք։

Մայրն կը պատասխանէ այդպիսիներուն—Մի՛ երթաք, իմ սիրելի զաւակունքըս, մի՛ թողուք զիս, դուք միայն մնացեր էք ինծի մխիթարութիւն· քովս մնացէք, Աստուած ողորմած է, Նորէն կը շինենք, Նորէն կը շէնենանք ու կը շատնանք։

Եւ ահա որդւոց մէկ քանիները լսելով զայս կը բարկանան իրենց Մօրը, «Դու, կի՛ն յիմար, դեռ Աստուծոյ կը հաւատաս, դեռ Աստուած ողորմած է կ'ասես, չե՞ս տեսներ դեռ այսքան անիրաւութենէ վերջը թէ Աստուած չկայ···»

Հոս, Ձեր մէջ, կա՞ն այդպիսի որդիներ, չգիտեմ, չեմ կարծեր։ Ինչ՞ կը խորհիք դուք Հայաստանի այս աղէտներուն վրայ, ինչ՞ յոյս ունիք, ինչ միտք· եթէ իւրաքանչիւրդ խօսելու պատեհութիւն ունենայիք, թերեւս շատ մը տարբեր տեսութիւններ երեւան գային։ Բայց դուք կ'ուզէք որ ես խօսիմ, ես պարզեմ ձեզ իմ յոյս և խորհուրդ։ ՀԱՅԿԻ մէջ միշտ կը պարզեմ արդէն տեսութիւններս· այսօր պարզեմ ձեզի անձնական զգացումներս։

Իմ փորձառութիւնս ալ շատ նման է Յոբինին։ Իմ բնիկ քաղաքի՝ Ակին՝ ջարդը սոսկալի եղած է, և աւելի կատարեալ քան ուրիշ ո և իցէ քաղաքի· քիչ այր մարդ ազատեր է, ազատուածներուն մէջ էին իմ երեք եղբայրներ և իմ որդեակս, որք փախան եկան մինչև Ամերիկա և ինծի գուժեցին «Կորեաւ Ակն, ինկան Ակին քաջերը· ջարդուեցան արուներն· մենք միայն ազատեցանք ու եկանք որ քեզի պատմենք։»

Պատմեցին ու կը պատմեն դեռ ամենը։ Ձեմ կրնար ձեզ կրկնել ամենը· չա՞տ է· բայց կրնամ քանի մը գլխաւոր կէտերը յիշել։

1· ԽԱԲՈՒԵՐ ԵՆ։ Որովհետև 1895ին տուգանք վճարելով ազատ մնացին կոտորածէ, և այնուհետև պահապան զօրաց հազարապետը քանի մը անգամ Քրդաց դէմ ելեր և լուրջ կերպով ետ մղեր է զանոնք, Ակին Հայ հասարակութիւնը համոզուած կը մնայր թէ վտանգ չպիտի պատահէր երբէք։ Նշաններ կային ցուցնող թէ նոր տրամադրութիւն մը գոյացած էր տեղւոյն զինուորական իշխանութեան մէջ, բայց Ակնցիք չեն ուզեր իրենց սիրելի ապահովութեան վրայ կասկածիլ։ Կոտորածի սկսած առաւօտուն, վերի թաղի Հայոց մէկ մասը, վստահելով հարիւրապետին խոստման, կը դիմեն Նորա թևարկութեանը, և ամենն ալ կը ջարդուին։ Ակնցւոց այս վստահութիւնը թէպէտ նեղը մնացածներու վստահութիւնն է, ծոմն իյնողին օձի փաթթուիլն է, բայց և այնպէս յանցաւոր և անմիտ վստահութիւն է։ Թէ Թուրքերը ուրիշ հարիւրաւոր ու հազարաւոր տեղեր ի՛նչպէս վարուած էին Հայոց հետ, և թէ բոլոր չարիքը կ'աղբերանար վերագոյն գլխէ մը, այդ ամենը լիովին պարզուած էր ամբողջ տարուան մը ահաւոր դէպքերովն· և ուստի բոլորովին յիմարութիւն էր վստահիլ ազգային յայտնի թշնամւոյ մը որ ոչ թէ մէկ կամ երկու այլհարիւր և հազար անգամ ստած, սուտ երդուած, սուտ խաբած էր մեր ազգը։

2· Եւ ոչ նուազ ցաւալի կէտը որ կը պարզուի Ակին ջարդի պատմութենէն, է մեր ժողովրդին անհոգութիւնը։ Եղբայրներս կը պատմեն թէ դէպքէն քանի մը ամիս առաջ, երբ վտանգի կասկածները զօրացան, իրենք լաւ ճարտարապետեալ թաքստոց մը պատրաստել տուին Հայու մը, պարտէզի մը քարէպատին ներքև, ուր մտնելով և չորս օր մնալով՝ ազատ մնացին ջարդէն։ Իրենք շատ մը բարեկամներու խրատ տուած են նոյնն անել, բայց ոչ ոք անուացեր է։ Ձէնք գտնելու և բուռն ուժով թշնամին հարուածելու անհնարութեան մէջ՝ պահուըտելով ազատելու նախահոգ միջոցներ հնարելը ոչ միայն խոհեմութիւն է այլ և պարտք մը· բայց յայդմ ալ չարաչար թերացած են Ակնցիք։

3· Ամենէն ցաւալին է այն որ ջարդի առաջին օրն, ոչ թաքստոց ունենալով և ոչ փախստի հնար, զի ամեն կողմէ կիրճերն ու կամուրջներն հսկողութեան տակ առնուած էին, մեր հարիւրաւոր քաջ երիտասարդներէն գոնէ 50 կամ 40, գոնէ 10 հոգի, չեն ունեցած այն ազնիւ մոլեգնութիւնը որով յարձակէին, ինչ զէնքով որ կարենային, գոնէ կացինով, թշնամեաց վրայ, որոշած լինելով մեռնիլ բայց քանի մը հոգի չան սատակ հանելէ վերջը։ Եթէ 10—20 երիտասարդ այդ կերպով զո-

հէին իրենք զիրենք, գոնէ 4—5 Թուրք սպաննելով, այն ատեն Թրքաց սանձարձակ և արհամարհոտ կաստաղութեանը սանձ մը դրած պիտի լինէին, և քաղաքի Թուրք երևելիներն իսկ պիտի ուզէին կոտորածին վերջ տալ՝ վախնալով Թէ իրենցմէ նոր զոհեր կը լինէին։ Հայոց կողմէն ամենեւին դիմադրութիւն չտեսնելով՝ Թուրքք փոխանակ կակղանալու և չափաւորութեան միտելու՝ ընդհակառակն ծայրայեղութեան տարած են իրենց անզգամութիւնը և ամեն արու հայ զոր գտնել կրցած են, սպաննած են առանց բացառութեան, մինչև անգամ ծերերն ու կոյրերն ու անդամալոյծներն։ Ես ՀԱՅՐի միջոցաւ չատոնց կը պոռայի գաւառներուն Թէ խոհական միջոցները, մեղմութիւնը կրնան օգտակար լինիլ ջարդը յետաձգելու, բայց երբ պայթումը տեղի կ'ունենայ և ջարդը կը սկսի, այն ատեն Թուրքը այլ ևս բանական և բարոյական էակ չէ, այլ գազան, և զայն չափաւորութեան ստիպելու միակ միջոցը երկիւղն է, պէտք է կատաղօրէն զարնել և սպաննել գպնոնք, և որքան չատ Թուրք սպաննել յաջողիս այնքան աւելի Հայ կ'ազատես։

Եթէ Ակնայ 800 արու սպաննուածներուն մէջէն 10 կամ 20 հոգի կամաւ մահ յանձն առնուին և նետուէին Թրքաց վրայ և քանի մը հոգի վիրաւորէին կամ սպաննէին, տարակոյս չկայ որ ջարդը երեք օր չէր շարունակեր և փոխանակ 800ի գուցէ 3—400 արու միայն կը սպաննուէին։

Հայրե՛նակիցներ, ինչ որ Ակին նկատմամբ կ'ասեմ, ամբողջ Հայաստանի նկատմամբ կ'ասեմ։ Ակին Հայերը ինչ սխալներ որ գործեցին, նոյնը կամ նմանը պիտի գործէին ուրիշ քաղաքի Հայերն ևս նոյն պարագայից տակ։ Ուրեմն խորհրդածութիւնս ընդհանուր է և դասը ազգային։

Ազգային դասը լաւ սովրինք, ե՛ղբարք, չյոգնինք զայն կրկին կրկին պարզելէ, ուսումնասիրելէ։ չատ սուղ դաս է։ 300,000 հոգի եղաւ այդ դասին գինը։ Համոզուինք Թէ մեր այս ահագին ազէտներուն սաստկութեան պատճառը ըստ մասին մենք եղանք մեր պարզմտութեամբ, մեր անհոգութեամբ և մեր վախկոտութեամբ։

Այս երեքը եղան մեր ժողովրդային թերութիւնները։ Իսկ առաջնորդներո՞ւ թերութիւնը ի՛նչ եղաւ։ Մեր ինքնակոչ առաջնորդք, մեր յեղափոխական պետեր չգործեցին թերութիւն. նոքա յիմարութիւն և ոճիր գործեցին։

Մեր ժողովուրդ Թուրքէն խաբուեցաւ, իսկ մեր առաջնորդք փոխանակ Թուրքը խաբելու՝ անոր աչքը բացին, անոր ականջին պոռացին «մենք պիտի ապստամբինք» «մենք վայն ի վրադ պիտի բերենք։»

Միւս կողմէն ջանացին այդ պետեր հաւատացնել Հայ ժողովրդին Թէ յեղափոխելը ոտու խաղ է։ Տղայամիտք ոմանք հաւատացին և այդ յիմարներու անհեթեթ հրահանգներն ի գործ դնել փորձեցին՝ փորձանք բերելով բովանդակ ազգին գլխուն։

Հիմա ժողովրդի աչքը բացուած է, այո՛, բայց 300,000 զոհեր տեսնելէ յետոյ։

Անցեալին վրայ մեր բոլոր քննադատութեանց նպատակը ուրիշ բան չէ բայց միայն փորձառութեան դասերը լաւ սովրիլ ապագային համար։ Մեծ, ամենակարեւոր դասը սա է Թէ Օրէնք կայ, Թէ յաջող կամ ձախող դէպքերը կարծուածին պէս պատահական չեն, այլ պատճառի և արդիւնքի սերտ կապակցութիւն ունին։ Անհոգութեան, պարզմտութեան և վախկոտ եսամոլութեան արդիւնքը վնաս է և կորուստ։ Բացբերանութիւնը մատնութիւն է, և մատնութիւնը ագետաբեր է։ Բայց մեր մէջ կան չատեր որք կը կարծեն Թէ ամեն սխալ գործել կրնան, և սակայն գերագոյն գօրութիւն մը, Աստուած, պարտի զիրենք պահել սխալներու վնասակար արդիւնքէն. և եթէ չի պահեր, ուրեմն Աստուած չկայ։ Իրենք ազատ են կը կարծեն կուրօրէն հետևելու կուրի առաջնորդութեանը, բայց Աստուած պարտաւոր է չթողուլ որ փոսն իյնան։ Կ'ուզեն որ Աստուած իւր օրէնքներն չյարգէ որպէս զի Աստուած լինի։ Աշտարակէն վար նետէ զքեզ, կը լինիս աճաղկոտոր, և Թէպէտ լինիս արդար, հրեշտակք չեն գար զքեզ վեր բռնել որ ոտքդ քարին չզարնես։ Դժբաղդութիւնն այն է որ մեր ազգին հին գրքերն ու հնոտի վարդապետները միշտ ներկայացուցեր են զԱստուած հրաշագործ Աստուած մը, և մեր տղայ ժողովուրդը կը կարծէ Թէ Աստուածոյ արուեստն է հրաշագործութիւն։ Ագետաբեր մոլորութիւն է դա։ Ո՛չ, ժողովուրդ, չկայ այն Աստուածը որում դու կը հաւատայիր, այլ կայ Աստուած ճշմարիտ որ

օրէնքներ գրած է իմաստուն և բարի և անյեղելի, որոց համեմատ կը քալես ինչ որ սերմանես։ Թուրքը պիտի քաղէ անշուշտ ինչ որ կը սերմանէ. և եթէ մենք այժմ կը քաղենք մեր անհաշիւ յանդգնութեան, մեր պարզմտութեան և անհոգութեան դառն պտուղները, վստահ լինինք թէ անշուշտ պիտի քաղենք անոյշ պտուղները ազատութեան և բարօրութեան եթէ հաստատ հաւատով տարածենք մեր ազգին մէջ ճշմարտութիւն, ողջամիտ գաղափարներ, անկեղծ լուսաւորիչ լրագրութիւն և մատենագրութիւն, բարեկրթութիւն և ուսումն ու գիտութիւն։ Փրկութեան պայմաններն կատարենք օրինաւորապէս. անշուշտ կը փրկուինք։

ԸՄՆԸՅ ՁԸՐԴԻ՞Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Շար. տես թիւ 10 և 12։)

Փոթորիկէն առաջ

Սեպտ. 2ին ամեն ոք ըստ սովորութեան շուկայ եկած էր. հազիւ մէկ երկու ժամ անցած էր՝ սկսան զօրաց խումբակներ պտըտիլ շուկային մէջ. վտանգի ժամանակներ հազարապետն այդպէս անել կուտար՝ ժողովրդեան վստահութիւն ներշնչելու համար. բայց ինչ որ սովորական չէր, այն էր որ փողահարներ և հարիւրապետներ կամ տեղակալներ կային խումբակներուն հետ։ Ժողովուրդը արդէն կասկածով լեցուն, այս բան բոլորովին ահաբեկեց. խանութէ խանութ, դրացիներ, բարեկամներ իրարու կը հարցնէին՝ ի՞նչ կայ նորէն. երկիւղի զգացում մը բոլոր շուկային մէջ անմիջապէս տիրեց, ձեռքերը թուլցան, գործերն թողուեցան. վախ կայ կըսեն, Քիւրդ կուգայ։ Շուկային մէջ անսովոր գործունէութիւն մը կար Թրքաց կողմէ. կ՚երթան, կուգան. հոս հոն կը վազեն. գիւղացիներու բազմութիւնն ալ ուշագրաւ էր. այս անբնական վիճակն քանի շարունակուէր շուկան այնքան կը դատարկանար. խանութներն փակել կարելի չէր. ով որ փակէր՝ անդորրութիւնը խանգարող պիտի նկատուէր և ո՞վ գիտէ քանի տարւոյ բանտարկութեան պիտի դատապարտուէր. բայց որովհետև ամեն խանութ գրեթէ երկու երեք մարդ ունի, մէկ կամ երկուքը կրնան բացակայիլ։ Այդ օրն ալ կ՚անցնի։ Յայտնի է թէ երկիւղներն զօրաւոր են այս անգամ. ամեն մարդ տուն կ՚երթայ և վերջինը կը լինի իրենց կեանքին։

Անոնք որ ապաստանարան մը ունին՝ բնականաբար այն կողմերն կ՚երթան մօտ լինելու իրենց թաքստոցներուն. եթէ բան մը ունին հոս հոն կը պահեն տան մէջ, փայտերուն ետեւ, տերեւներուն մէջ, մութ անկիւններ կը դնեն. ահաւոր գիշերներէ մէկն է այս Հայոցս համար. վերջի՛ն խաղաղ գիշերն, ընտանեկան կենաց վերջին ժամերն. որչա՛փ ահագին է այնպիսեաց թիւն որոց համար այդ տենդոտ գիշեր վերջինն եղաւ, բաժնուեցան իրենց սիրելիներէն առանց յետին հնաւք բարեաւ մը կարենալ ըսելու։

Խաբէութիւնը

Սեպտեմբերի 3ը Գշ. օրն է. անիծեա՛լ օր. կործանում և աւեր, մահ և սարսափ, յափշտակութիւն և բռնաբարում, հուր և սուր ամենքն ի հանդէս եկին այդ օր։

Ընդհանրապէս խօսելով շատ ընտանիքներ իրենց տուներէն հեռացած չին, այլ և այլ թաղեր ու տեղեր լաւագոյն նըկատելով հոն ապաստանած էին. թշնամին վռնտելու կամ վախցնելու բան մը չկար, անոնց գթութե՛անը հնացած էր։ Դէպքը դեռ չսկսած՝ մեծ իրարանցում կար, մանաւանդ վերի թաղը կը դատարկանար. շատեր վար կ՚երթային կամ ուրիշ տեղեր կ՚աճապարէին հասնիլ. վասն զի քաղաքին ուրիշ մասերուն վնաս իսկ եթէ հըլլար «Քէօյ Պաշին» յայտնի մասնաւոր թշնամութեան առարկայ էր և մեծ վնաս պիտի կրէր։

Առաւօտեան ժամերն այդպէս կ՚անցնին. տեղափոխութիւն անելով և այլևայլ բաներ պահելով. ոմանք շուկայ երթալով խանութ բանալու անզգայութիւնն կ՚ունենան։ Դէպքերն կը յառաջանան սակայն, զինեալ մարդեր կսկսին շուկան պտտիլ. Նալըբեան Ստեփան Աղան ալ, որ խտարէի անդամ է, խանութին դուռը կը նստի. հեռագիր մը կը ցուցնեն իրեն, Կ. Պոլսէն տեղական կառավարութեան ուղղեալ, սա իմաստով թէ անդորրութիւնը պահպանեցէք։ Ինքն ալ խանութ բացողներէն զոմանս կը կանչէ և կ՚ըսէ որ երթան թաղերն լուր տալ թէ բան չկայ,

խանութ եկէք. աս ի՛նչ «էտէպսիզութիւն» է մերիններուն արածը: Քիչ յետոյ տէլլալ կը կանչուի թէ բան մը չկայ թող ամեն ով խանութ գայ: Կացութիւնը կը կնճռոտի. կ'ուզեն չուկայէն հեռանալ և չեն կրնար. որպէս թէ բան գնելու համար շատ Թրքեր ներս մտած են. զինեալ բազմութիւնը կը շատնայ. դէպ ի լեռը կ'ուղղուի ամեն աչք. Հայք տանիքները ելնելով կը դիտեն Քրդաց բազմութիւնը որք զինուորական կարգով կը յառաջանան: Միամիտներն իսկ կ'ըսկսին հաւատալ թէ չարիքը վերահաս է։

(Շարունակելի)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ

Եօթն տարիներ առաջ ջանք արի յառաջ բերել մի միութիւն հայ ուսանողաց Ամերիկայում, նպատակաւ ուսումնասիրելու և քննելու կրթական խնդիրներ և ի մասնաւորի խորհրդակցելու և գտնելու լաւագոյն միջոցներ հայ ժողովրդեան կրթական մակարդակն բարձրացնելու։ Այժըմ ուրախութեամբ կ'իմանամ թէ մի «Հայ Ուսանողաց Միութիւն» վերջերս հաստատուեր է Եւրոպայում նման նպատակաւ։ Հայ ուսանողաց թիւն այս երկրում այժմ աւելի է քան եօթն տարիներ առաջ և յուսալի է որ մեր եւրոպեան ուսանողաց այս գովելի քայլն բաւական գրգիռ լինի մեր Ամերիկեան ուսանողաց՝ անյապաղ գոյացնելու մի նման միութիւն որ անշուշտ յետոյ կրնայ յոյժ օգտակար եղբայրական կապ հաստատել միւսոյն հետ։

Որովհետև այս թելադրութիւն կամ կոչում կը լինի Ամերիկայի հայ ուսանողներուն (անոնց որ ակադէմական կամ գիտական, սակայն ոչ professional, ուսում կ'ընդունին), բնաւ հարկ չէ լիագոյն լուսաբանել այդ նպատակ կամ ջանալ ապացուցանել նորին օգտակարութիւն և կարեւորութիւն, ինչ որ արդէն ծանօթ է նոցա։ «Հայ ուսանողաց» թուոյն մէջ հաշուելու է նաև զանոնք որ հայ ուսանողներ եղած են հոս, և կը պահեն իրենց հետաքրքրութիւն կրթական խնդրում։ Բոլոր հայ ուսանողներ այս երկրում որ կը համակրին այս թելադրութեան թող հաճին առ այժմ տեղեկագրել առ S. C. Kebabian, 48 Wall St., New York City.

Ս. Գ. ՔԷՊԱՊԵԱՆ

ԱՆԳԼԻԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԴԱՍ. Ը.

Դերանուններու մասին կարեւոր գիտելիք մ'ալ կը գտնենք երբ սա խօսքը անգլիերէնի թարգմանենք.—Թովմաս, դուռը բաց. բա՛ց. Thomas, open the door; open it.

Անգլիերէնի մէջ անխախտ սովորութիւն է itը դնել այդ պարագայի մէջ. մինչ հայերէնի մէջ անախորժ և բոլորովին աւելորդ պիտի լինէր եթէ անգլիերէնի նման ասէինք.—Դուռը բա՛ց. բա՛ց անիկա։

Նոյնպէս Հայերէն կ'ասենք.—Հայրդ տո՞ւնն է (կամ ի տա՞ն է). «Տունն է» կը պատասխանենք։ Գէշ հայերէն կը լինի եթէ ասենք. տունն է անիկա։ Բայց անգլիերէնն ալ, ատոր ճիշդ հակառակը կ'ուզէ, պէտք է «անիկա» անպատճառ դնել և ասել սապէս.—Is your father at home? (կամ in.)—HE is in. Չես կրնար ասել լոկ is in.

Ուրիշ օրինակ մը.—Գիրքդ ո՞ւր է.—Հո՛ս է. (չենք ասեր «հոս է Ան»։ Անգլիերէն կ'ասեն—Where is your book? IT is here, և ոչ թէ is here կամ here is.

Այստեղ յիշել կ'արժէ ինչ որ արդէն ասեր եմ դերանուններուն իբրև տէր բայի գործածութեան մասին: Հայերէն կ'ասենք—Անգլիերէն գիտե՞ս.—Գիտեմ, (ոչ թէ «ես գիտեմ»)։ Անգլիերէն սապէս կը լինի. Do you know English— I know, (ոչ թէ լոկ know.)

Հայերէնի մէջ ես-ը կը դնենք երբ շեշտել ուզենք. օրինակի համար. «Ե՛ս գիտեմ թէ ինչ նեղութիւն կրեցի.» (այսինքն միայն ես, և ոչ այլ ոք։)

«Ուրախ եմ որ զձեզ կը տեսնեմ»խօսքը չես կրնար թարգմանել am glad to, այլ պէտք է «ես» մը դնես անշուշտ և ըսես «I»am glad to see you.

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեան դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեզ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

ՅԱԼ ԵՒ ՅԱԼՔ

Լոնտոն, Յուլիս 2.—Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Թէվֆիք փաշան պիտի ծանուցանէ Տէրութեանց դեսպաններուն թէ Դահլիճը զԹեսաղիա պահելու անխտիր իրաւունքին վրայ պիտի պնդէ։

Էտհէմ փաշա, Թեսաղիոյ բանակին ընդհանուր հրամանատար, իւր հրաժարականը մատուցեր է Սուլթանին այն պատճառաւ թէ խաղաղութեան այժմու առաջարկեալ պայմաններուն տակ ինքը անկարող է բանակին կարգապահութեանը երաշխաւոր լինիլ։

Լոնտոն, Յուլիս 5.— Պոմպէյէն կը հեռագրեն թէ Կալկաթայի մօտերը անցեալ օր տեղի ունեցած խռովութեան ատեն վեց հարիւրէն մինչև հազար խռովարարներ սպաննուած են։ Բնիկներու կողմէն եւրոպացի կանանց դէմ նախատինքը օր քան զօր կը յաճախեն բոլոր քաղաքին մէջ, և շատ զայրոյթ և գրգիռ կայ։

Բեդէրպուրկ Յուլիս 6.— Նովոէ Վրէմեա թերթը զօրաւոր կերպով կը յորդորէ Թուրք կառավարութիւնը թողուլ այլ ևս խուսափողական կասկածները խաղաղութեան բանակցութեանց մասին, եթէ չուզեր որ Տէրութիւնք խիստ միջոցներ ձեռք առնուն իրենց խաղաղութեան ծրագիրը ընդունել տալու համար։

Կ. Պոլիս, Յուլիս 7.—Ռուսիա շրջաբերական ծանուցագիր մը յղեր է Տէրութեանց, թելադրելով որ խաղաղութեան բանակցութիւնները վերջաւորութեան մը բերելու փութան։ Ռուսիոյ կողմանէ այսպիսի գործողութեան մը ամենամեծ կարեւորութիւն կուտան հոս։

ՀԱՅԿԻ Յուլիս մէկի թիւը այլ և այլ արգելքներով չհրատարակուեցաւ. ներկայ թիւին պիտի յաջորդէ Օգոստոս 1ի թիւը։

Կը խնդրենք մեր Պուլկարիոյ Արգոյ գործակալէն յղել մեզ անյապաղ բաժանորդաց ներկայ տարուան ցանկը. մինչեւ ցարդ կը շարունակենք անցեալ տարուան ցանկին հետևիլ, քանի մը յաւելուածներ արած լինելով։

Ուրախութեամբ կիմանանք Օրիորդ Ռեբեկա Քիւրքճեանի ամուսնութիւնը ընդ Տիար Սարկաւագեանի՝ ի Բրովիտէնս։

Պատ. Մարկոս Բարունակեան, երէց Ամերիկեան եկեղեցւոյ մը ի Վալտէն, Վէրմոնթ, ամուսնացեր է ամերիկուհւոյ մը հետ։

Ցաւով կ'իմանանք թէ Տիար Ն. Մելիքեանի, ի Պրուքլին բնակող մեր հայրենակցի, դստրիկն Զապէլ մեռեր է ամսոյս 9ին։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

AGHASSI

ZEITOUN

Depuis les Origines jusqu' a l'Insurrection de 1895.

Traduction d'ARCHAG TCHOBANIAN

Preface by VICTOR BERARD

Paris, Mercure, 1897, pp. 318

Ա. ԵՒ Մ. ԳԱՐԱԳԷՈՒԶԵԱՆ

71 WALL STREET

NEW YORK

Տունը կը վաճառէ օսմանեան ոսկւով փոխանակագիր Կ. Պոլսոյ վրայ։ Քաղաքէս հեռու գտնուողք կարող են դրամը ղրկելով փոխ-գիրը ստանալ։

Փոխ-գիր կը տրուի մեծ թէ փոքր գումարներու համար, ի տես վճարելի։

Հասցէ—

A. & M. KARAGHEUSIAN,

71 Wall Street,

New York, N. Y.

ԱԿՌԱՅԻ ՄԱՍԻՆ

SIEGEL · COOPER Co.

SIXTH AVENUE 18th & 19th STS. NEW YORK.

Պատիւ ունինք յարգոյ Հայ հասարակութեան ծանուցանել թէ մենք վերոյիշեալ տիեզերահռչակ մեծ վաճառատան առաջին յարկին վրայ յատուկ տեղ մ'ունինք ուր արուեստական ակռաներ կը շինենք ու կ'ընծայենք մեր յաճախորդներուն, թէ հատով, թէ վերի շարքը ամբողջ, թէ վերի ու վարի ծնօտներու ակռաները միասին։ Մեր շինածը ամենալաւ, ամենադիմացկուն տեսակէն է։ Այն Հայ Տիկինները ու Պարոնները որ անգլերէն լաւ չեն խօսիր, պիտի գտնեն մեր քով դիւրութիւն, վասն զի մեզի օգնական ունինք հայ ատամնաբոյժ մը։ Վերի ծնօտի ամբողջ շարքը ութ տոլարով կը շինենք, վարինն ալ ութ տոլարով։ Մեր գները յոյժ չափաւոր են, ու գործը յոյժ ընտիր։

E. P. HAYES, D. D. S.

Թուրքիա դրամ ուղարկելու ապահով ճամբայ մ'է

ՄԵՐ ՆԻՒ ԲՐԻԹԸՆԻ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴԱՆԳԱՆ։

Մենք կուտանք փոխ-գիր, անգլիական ոսկիի։ Մէկ անգլիական ոսկին $4.95 էն աւելի չ'արժեր, երբեմն ասկէ պակաս ալ կ'ըլլայ։ Թիւրեւ ժամանակ մը յետոյ Թրքական ոսկիի փոխ-գիր ալ տալ բսկսինք։ Փոխ-գիր կուտանք մենք թէ' Թուրքիոյ և թէ եւրոպական երկիրներուն համար։ Անգլիերէն չգիտցող Հայերը թող հայերէն գրեն մեր հասցէին, մենք հայ թարգմանիչ ունինք հոս։ Ի դիւրութիւն ամենուն, կուտանք հինգ անգլիական լիրայի, բայց մէկ լիրայէն պակասի փոխ-գիր չենք կրնար տալ։ Մեր հասցէն է ասպէս—

Mr. William F. Walker,
Treasurer Savings Bank of
New Britain, Conn.

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջն
Դեղագրեր կը շինուին խնամով

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Մեծատոր Անգլիերէն Լեզուի

Աշխատասիրեաց և հաւաքեց
Տիգրան Մ. Պետիկեան
Նիւ Եորք, 1897։

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական ևայլն, և Հայերէնէ Անգլիերէն ու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ։ Եօթը հազար բառ կայ։

Գինն է 50 սէնթ կամ 2½ ֆրանք։

Դիմել առ ՀԱՅՔի խմբագիրն
341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղողին գիրք չենք կրնար յղել։

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ
ԵՒ ՀԻՒՐԱՆՈՑ

14 Market St., Worcester, Mass.

Այս է ճաշարան և Հօթէլ միանգամայն, ուր ուղեւորներ կրնան օթեվանել, գիշեր մը կամ օրերով, և հայկական ընտիր կերակուրներ ուտել, յոյժ դիւրամատչելի գներով։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԻՒՖԷՆՔՃԵԱՆ
Ճաշարանապետ և հիւրանոցի տեսուչ

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով.

Ա. տարի,	1	տոլար	50	սէնթ	կամ	7.5 Փր.
Բ. ,,	2	,,			կամ	10 Փրանք։
Գ. ,,	2	,,		,,	,,	,,
Դ. ,,	2	,,		,,	,,	,,
Ե. ,,	2	,,		,,	,,	,,
Զ. ,,	1	,,		,,	5	,,

ՀԱՅՔ
ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Տարեկան բաժնեգինն է կանխիկ երկու տոլար (տասն ֆրանք)

Հասցէն է

M. S. GABRIEL, M. D.
341 West 23rd St., New York.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ